ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ՍՏԱՆԴԱՐՏԱՑՄԱՆ ԵՎ ՉԱՓԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՄԱՐՄԻՆ» ՓԲԸ
МИНИСТЕРСТВО ЭКОНОМИКИ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
ЗАО «НАЦИОНАЛЬНЫЙ ОРГАН ПО СТАНДАРТИЗАЦИИ И МЕТРОЛОГИИ»
MINISTRY OF ECONOMY OF THE REPUBLIC OF ARMENIA
«NATIONAL BODY FOR STANDARDS AND METROLOGY» CJSC

«03» հունվար 2021թ. ՍՉԱՄ-615

«Պահապան 1» ՍՊԸ տնօրեն
տիկին Աննա Վանեցյանին
(ք.Երևան, Ավան, Քուչակ 16/2)
Էլ.փոստ՝ pahapan119@mail.ru

Ծանուցում
Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին

«Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» ՓԲԸ և «Պահապան 1» ՍՊԸ-ի միջև 2021թ. փետրվարի 26-ին կնքված թիվ ՍՉԱՄ-ԳՀԾՁԲ-21/1 ծածկագրով պայմանագրի շրջանակներում «Պահապան 1» ՍՊԸ-ն ստանձնել է պարտավորություն մատուցելու անվտանգության և պահնորդային ծառայություններ՝ համաձայն պայմանագրի թիվ 1 հավելվածով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջներին համապատասխան, մասնավորապես՝

-ըստ տեխնիկական բնութագրի «Պահապան 1» ՍՊԸ-ն պարտավոր է 09:00-ից մինչև 18:00-ն ընկած ժամանակահատվածում ապահովել պահակակետում միաժամանակ երկու պահնորդների ներկայությունը, սակայն տվյալ պահանջը չի պահպանվում, բազմիցս պահակակետում ներկա է գտնվել միայն մեկ պահնորդ, որը ֆիքսվել է նաև տեսախցիկներով,

-պահնորդներն աշխատանքի են ներկայացել ոչ սթափ, դրսևորել են անվայել և անհարգալից պահվածք կազմակերպության աշխատակիցների ներկայությամբ, ինչի մասին տեղեկացվել է «Պահապան 1» ՍՊԸ-ի ղեկավար կազմին,

-պահնորդները պատշաճ չեն ներկայանում ծառայության, մասնավորապես՝ վերջիններիս կողմից խախտվել են համազգեստի կրման կանոնները:

Թիվ ՍՉԱՄ-ԳՀԾՁԲ-21/1 ծածկագրով պայմանագրի 2.1.3 կետով Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝ մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին:

Հաշվի առնելով, որ «Պահապան 1» ՍՊԸ-ն խախտել է պայմանագրով ստանձնած պարտավորությունները, «Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» ՓԲԸ-ն միակողմանի լուծում է «Պահապան 1» ՍՊԸ-ի հետ 2021թ. փետրվարի 26-ին կնքած թիվ ՍՉԱՄ-ԳՀԾՁԲ-21/1 պայմանագիրը՝ պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կիրառելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված

«Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

«Պահապան 1» ՍՊԸ-ին «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով «Պահապան 1» ՍՊԸ-ի տվյալները օրենքով սահմանված կարգով կներկայացնի լիազոր մարմնին:

Տնօրենի ժամանակավոր
պաշտոնակատար Ա.ԲԱԲԱՅԱՆ